

«Հ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 41/2

27 օգոստոսի 2013 թ.

Քննարկվեց «Մեր-Շին» ՍՊԸ 02.08.2013 թ-ի դիմում-բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ 25.07.2013 թ-ի թիվ 2126503 ստուգման ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ պետի 12.07.2013 թ-ի թիվ 2126503 հանձնարարագրի «Մեր-Շին» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ 25.07.2013 թ-ի թիվ 2126503 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 252.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

ՍՊԸ-ն ք.Սևան, կենտրոնական հիվանդանոցի հարևանությամբ հասցեում զբաղվում է հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությամբ: Հանրային սննդի գործունեության համար զբաղեցրած սպասարկման սրահի փաստացի մակերեսը կազմում է 38 քառ. մետր, որի համար հայիս ամսին չունեի համապատասխան արտոնագիր:

Համաձայն «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի՝ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից առանց արտոնագրի գործունեության իրականացման տվյալ վայրում սույն օրենքի թիվ 7 հավելվածում նշված գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելու դեպքում իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ առանց արտոնագրի գործունեությունը փաստացի իրականացնելու ժամանակահատվածի (բայց ոչ պակաս երեք ամսվա) համար սույն օրենքի թիվ 8 հավելվածով սահմանված կարգով հաշվարկված՝ վճարման ենթակա արտոնագրային վճարի կրկնակիի չափով: Այսպիսով ՍՊԸ-ին առաջադրվում է տուգանք 252.000 դրամ (42.000 X 2 X 3 ամիս):

«Մեր-Շին» ՍՊԸ բողոքում մասնավորապես նշված է.

27.07.2013 թվականին ստացել եմ ՀՀ ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ-ի կողմից 25.07.2013 թ-ին կազմված թիվ 2126503 ակտը, որով «Մեր-Շին» ՍՊԸ-ն տուգանվել է 252.000 դրամի չափով: Գտնում եմ, որ վարչական ակտը ոչ իրավաչափ է, կազմվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ և ենթակա է անվավեր ճանաչման կամ վերացման հետևյալ պատճառարանությամբ.

համաձայն վարչական ակտի՝ իբր պարզվել է, որ ընկերությունը ք.Սևան, կենտրոնական հիվանդանոցի հարևանությամբ հասցեում զբաղվում է հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությամբ և հանրային սննդի գործունեության համար զբաղեցրած սպասարկման սրահի փաստացի մակերեսը կազմում է 38 քմ, որի համար հուլիս ամսին չի ունեցել համապատասխան արտոնագիր:

Սույնով հայտնում եմ Ձեզ, որ ընկերությունը չի զբաղվում հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությամբ, ընկերությունը զբաղվում է մանրածախ առևտրով և հյուրանոցային գործունեությամբ: Ակտը կազմվել է ենթադրությունների հիման վրա, որևէ մեկը մուտք չի գործել ընկերության կողմից զբաղեցված տարածք, չի կատարվել հսկիչ գնում, վարչական իրավախախտման արձանագրություն, որպես այդպիսին տեղում չի կազմվել: Այդ ամենի մասին տեղեկացրել եմ նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ-ին, սակայն իմ բացատրությունները հաշվի չեն առնվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ խնդրում եմ անվավեր ճանաչել կամ վերացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ-ի կողմից 25.07.2013 թ-ին կազմված թիվ 2126503 ակտը:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով «Մեր-Շին» ՍՊԸ տնօրենի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> « օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում»:

Քննարկվող դեպքում «Մեր-Շին» ՍՊԸ-ի նկատմամբ կազմված ստուգման ակտով առաջադրվել են լրացուցիչ պարտավորություններ, հետևապես առկա է ընկերության համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքը: Այսինքն, ստուգման ակտի 1-ին կետով արձանագրված խախտման ապացուցման պարտականությունը կրում է ստուգող մարմինը՝ ի դեմս ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց:

Սույն բողոքի քննարկման ընթացքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ ստուգման ակտով լրացուցիչ պարտավորություններն առաջադրվել են վերագրյալ օրենսդրական նորմի, այն է՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» « օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց առաջարկվեց Հանձնաժողովին ներկայացնել այն ապացույցները, որոնք հիմք են հանդիսացել ստուգման ակտի 1-ին կետում նկարագրված խախտումն արձանագրելու համար, այն է՝ ընկերության կողմից ստուգման ընթացքում հանրային սննդի գործունեություն իրականացնելու վերաբերյալ, սակայն որևէ հիմնավոր ապացույց չներկայացվեց:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում կիրառելի է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» « օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, որի համաձայն. «Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել»:


Իր հերթին, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» « օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» « օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել « ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ 25.07.2013 թ-ի թիվ 2126503 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ